ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃՅԱՆ

ՄԻԼԵՆԱ ԿԱՏԱՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.154

ԱՄՓՈՓՈՒՄ

Ազգային արժեքների վերաիմաստավորման արդի պայմաններում էլ ավելի է կարևորվում աշխարհասփյուռ հայության տարբեր գաղթօջախների պատմության տարաբնույթ հիմնախնդիրների համակողմանի հետազոտումը, որն ինչպես սփյուռքահայ, այնպես էլ հայրենական արդի պատմագիտության կարևորագույն առաջնահերթություններից է: Այն ամբողջացնում է այս կամ այն երկրի Հայկական Սփյուռքի պատմության որոշակի ժամանակահատվածի ազգապահպան գործառույթները և դիտարկման ենթարկում հայտնի, իսկ երբեմն էլ քիչ հայտնի դեպքերն ու իրադարձությունները:

Ուսումնասիրության նպատակն է համակողմանի հետազոտության հենքի վրա ներկայացնել լիբանանահայ գաղութի տարբեր տարիներին հրատարակված պարբերական մամուլը, ինչպես նաև այդ ոլորտում առկա առնչությունների պատկերը՝ 1945-1991թթ. ժամանակահատվածի մարտահրավերների համատեքստում:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Լիբանանահայ մամուլ, տպարան, կուսակցական, հայրենակցական, գրական-գեղարվեստական, մշակութային, կրոնական, մարզական, երիտասարդական, պաշտոնական, կրթական պարբերականներ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լիբանանը արաբական փոքր երկիր է Միջերկրական ծովի արևելյան ափին: Մարդիկ այստեղ ապրում են հնագույն ժամանակներից: Վաճառաշահ հարուստ

քաղաքներով ու զարգացած գյուղատնտեսությամբ այս երկրամասը, որը հնում կոչվում էր Փյունիկիա, շատ հին պատմություն ունի: Տարբեր ժամանակներում այն զավթել են եգիպտացիներն ու խեթերը, բաբելացիք ու պարսիկները, ասորեստանցիներն ու հռոմեացիները, եվրոպական խաչակիրներն ու թուրքերը:

Բացի արաբներից Լիբանանում ապրել են հայեր, քրդեր, հույներ, թուրքեր, պարսիկներ:

Վաղնջագույն ժամանակներից հայ վաճառականները Լիբանան էին բերում գինի, մրգեր, որդան կարմիր ներկը և այլ ապրանքներ: Արդեն XII–XIII դարերում այդ երկրի նավահանգստային քաղաքներում կային հայ համայնքներ, որոնք գնալով ստվարանում էին՝ Լիբանանի հարևանությամբ գտնվող Կիլիկյան Հայաստանի քայքայմանը զուգընթաց:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Լիբանանը Օսմանյան կայսրության նահանգներից մեկն էր: Պատերազմից հետո Ազգերի լիգայի մանդատով այն կառավարում էր Ֆրանսիան:

Հայերի առավել մեծ հոսք դեպի Լիբանան, սակայն, տեղի է ունեցել, երբ թուրք ջարդարարների կազմակերպած Մեծ եղեռնից փրկված տասնյակ հազարավոր մեր հայրենակիցներ ապաստան են գտել այնտեղ:

1943թ.-ին Լիբանանը հռչակվեց անկախ հանրապետություն: 1946–47թթ.-ին հազարավոր լիբանանահայ ընտանիքներ հայրենադարձել են:

1975 թվականի կեսերին Լիբանանում սկիզբ առած քաղաքացիական պատերազմի հետևանքով լիբանանահայերի մի մասը արտագաղթեց հարևան Սիրիա, Կիպրոս, ինչպես նաև եվրոպական երկրներ ու ԱՄՆ **(Թոփուզան Հ., 1986)**: Ավելի ուշ, Իսրայելի հետ հակամարտող Պաղեստինի ազատագրական կազմակերպության առկայությունը Լիբանանի տարածքում պատճառ դարձավ, որ Իսրայելը քանիցս հարձակվի Լիբանանի վրա, իսկ 1982թ. նույնիսկ գրավեց նրա ամբողջ հարավն ու մայրաքաղաք Բեյրութի արևմտյան մասը: Այդ պայմաններում Լիբանանում բռնկվեց քաղաքացիական պատերազմ, որը մեծ վնաս պատճառեց երկրին **(Թոփուզյան Հ. , 1986)**: Լիբանանահայ համայնքը

մինչև 1970-ականների կեսերը կազմել է շուրջ 250-300 հազար: Լիբանանի քաղաքացիական երկարատև պատերազմի (1975-1990թթ.) ու դրա հետևանքով առաջացած անապահովության ու տնտեսական տևական ճգնաժամերի հետևանքով այսօր տարբեր տվյալներով Լիբանանում բնակվում է շուրջ 100-120.000 հայ (ըստ ՀՀ Սփյուռքի գործերի գխավոր հանձնակատարի գրասենյակի կայքի 2024թ. տվյալների, էլփոստ՝ diaspora@gov.am):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը իրականացվել է պատմական անժխտելի և համոզիչ փաստերի մանրակրկիտ և համեմատական ուսումնասիրման միջոցով: Լիբանանահայ համայնքների նորագույն պատմության հետազոտումն ունի ինչպես գիտագործնական և տեսական, այնպես էլ քաղաքական և այժմեական նշանակություն: Այն մի կողմից բացահայտում է գաղութի ուսումնասիրվող ժամանակահատվածի պատմության տվյալ ոլորտի խճողված իրադարձությունները, իսկ մյուս կողմից ուղենիշ է դառնում պատմագիտական մտքի հետագա զարգացման համար: Այդ առումով խիստ արժևորում ենք ինչպես Անթիլիասի Մայր Աթոռի, Ազդակի, Զարթոնքի տպարանների գործունեությունը, այնպես էլ այլ հրատարակչական կառույցները: Այդ հոլովույթում վերոնշյալ հետազոտությունը իրենից ներկայացնում է նորանկախ պետականության տարիներին հիշյալ խնդրի համակարգված, ամբողջական, նորովի վերլուծություն:

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել այդ երկրներում հրատարակվող մամուլը, տվյալ թեմայի հետ կապված որոշ հեղինակների աշխատությունները: Հատկապես արժևորում ենք Սիսակ Հակոբ Վարժապետյանի, Արտաշես Տէր Խաչատուրեանի և Ժիրայր Դանիելյանի գրական ժառանգությունը: 2000թ. հետո Լիբանանահայ պարբերական մամուլի մասին որոշակի ուսումնասիրություններ ունի Գ. Եազըճեանը:

Հետազոտությունն իրականացվել է 4 փուլով՝ նախապատրաստական, փորձարարական, ստացված տվյալների մշակման և մեկնաբանման:

Ուսումնասիրության գործիքակազմը ընդգրկել է ռետրոսպեկտիվ վերլուծության, մասնագետների հետ փորձագիտական զրույցի, կոնտենտ և անհրաժեշտ այլ մեթոդներ, ինչպես նաև հատուկ մասնագիտական գրականության վերլուծություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լիբանանում լույս տեսած առաջին հայերեն պարբերականը «Լույս» (1918, Զահլե) խմորատիպ թերթն է եղել /հրատարակիչի մասին տեղեկությունները բացակայում են/, իսկ հայ գաղութի ամենահին թերթը «Փյունիկն էր, որը հիմնադրվել է 1923թ. և հետագայում վերածվել է «Նոր փյունիկ»-ի **(Լևոնյան Գ. , 1934)** /Խմբագրի մասին տեղեկությունները բացակայում են/, ապա՝ 1924թ. «Ազդակ»-ի: Այնուհետև գաղութի մեջ (Բեյրութ) սնկի պես աճել և թոռոմած են բազմաթիվ օրաթերթեր և գրական հանդեսներ մեր գաղութի ընթերցասեր հասարակությանը գոհացում տալու համար **(Վարժապետեան Ս., 1983)**: Սակայն խիստ կարևորվել է 1927թ. մարտին հիմնադրված «Ազդակ» օրաթերթը իր դաստիարակչական հետաքրքիր նյութերով և այլազան բովանդակությամբ, այն ազգապահպանության նպատակով կարևոր դեր է ունեցել ոչ միայն Լիբանանի, այլև ամբողջ Մերձավոր Արևելքի հայ գաղութների համար:

Լիբանանի հայության առաջին հայերեն թերթը՝ «Փյունիկը», դաշնակցության կենտրոնական կոմիտեի օրգանն էր. այն հրապարակվում էր սկզբում եռօրյա (1924-1926թթ.), հետո մինչև 1927թ. երկօրյա ձևաչափով: 1927թ. այդ թերթը «Նոր Փյունիկ» վերտառությամբ դադարեց գոյություն ունենալ երկու պատճառով.

1. Այդ ժամանակ Լիբանանի գաղթական հայությունը չէր կարող մեծածախս մամուլ պահել և զարգացնել:

2. Վարդապետյան-Տխրունի «ոճիրների» պատճառով կառավարությունը արգելեց թերթի հրապարակումը:

Լիբանանահայ մամուլը հիմնականում տպագրվել է Բեյրութում, քանի որ հայերը կենտրոնացված էին Բեյրութում, որտեղ ցայսօր լույս են տեսել

կուսակցական, հայրենակցական, գրական-գեղարվեստական, մշակութային, կրոնական, մարզական, երիտասարդական, պաշտոնական, կրթական 500-ից ավելի պարբերականներ: Առավել աչքի ընկած և տևական հրատարակվածներից են հասարակական-քաղաքական, գրական «Լիբանան» (1924-1935) եռօրյա թերթը, գրական-գեղարվեստական «Երիտասարդ հայուհի» (1932-1934, 1947-1968) ամսագիրը, հասարակական, մշակութային «Ամենուն նոր տարեցույցը» (1937-1942) տարեգիրքը, քաղաքական, ազգային, գրական, մարզական «Առավոտ» (1938-1947) օրաթերթը, Լիբանանի համայնավար, կուսակցության հայկական հատվածի «Ժողովուրդի ձայն» հասարակական-քաղաքական, գրական (1938-1949, անկանոն) պաշտոնաթերթը, գրական-գեղարվեստական-գիտական «Հայ գիր» (1938-1944) հանդեսը և «Ծիածան» (1939-1949) պարբերաթերթը, ՀՄՄ գրական-գեղարվեստական-մարզական «Կայծ» (1943-1947) պաշտոնական հանդեսը, գրականության և արխիվային «Անի» (1946-1955, անկանոն) ամսագիրը (Բաբլոյան Մ. ,1965), Հայ Կաթողիկէ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կրոնական, հասարակական-քաղաքական, գրական «Մասիս» (1947-1983 և 1988-1995) շաբաթաթերթը (Եղիայան Բ. 1975), «Փարոս» (1951-1952) երգիծական կիսամսյա հանդեսը, Թեքեյան մշակութային միության գրական և մշակութային «Շիրակ» (1956-1997) ամսագիրը, բժշկական և առողջապահական «Բժիշկ» (1955-1984, անկանոն) ամսաթերթը, «Հառաջ» (1957-1964) քաղաքական շաբաթաթերթը, Լիբանանահայ գրական շրջանակի «Էջեր գրականության և արվեստի» (1965-1972) հանդեսը, գրական, հասարակական «Հառաջ» (1965-1970) շաբաթաթերթը, գրական, հասարակական «Երիտասարդ հայ» (1969-1975) երկշաբաթաթերթը, մշակութային «Ահեկան» (1966-1970) եռամսյա հանդեսը, ՀՅԴ պաշտոնական «Ազդակ շաբաթօրյակ-դրոշակ» (1969-1985) հասարակական-քաղաքական շաբաթաթերթը, Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի «Հայաստան» (1980-1987, 1991-1997, անկանոն) պաշտոնաթերթը և այլն: Գրական օրաթերթերից Բեյրութում տևական ժամանակ լույս են տեսել «Ազդակ»

(1927 թվականից, 1965 թվականից՝ ՀՅԴ-ի Լիբանանի շրջանի պաշտոնաթերթ) հասարակական, քաղաքական, ազգային, գրական օրաթերթը, Հայ կաթողիկե պատրիարքության կրոնաբանասիրական «Ավետիք» (1932 թվականից, անկանոն) պաշտոնական հանդեսը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կրոնական, գրական ու բանասիրական «Հասկ» (1932 թվականից) պաշտոնական ամսագիրը և «Հասկ հայագիտական տարեգիրքը» (1948 թվականից), ՌԱԿ-ի պաշտոնական «Զարթոնք» (1937 թվականից, անկանոն) ազգային-քաղաքական, հասարակական, գրական օրաթերթը, Մերձավոր Արևելքի Հայ ավետարանական քրիստոնեական Ջանից ընկերակցության «Ջանասեր»(1937 թվականից) պարբերաթերթը, ՍԴՀԿ կենտրոնական վարչության և Լիբանանի շրջանի ազգային, քաղաքական, գրական «Արարատ» (1937 թվականից) պաշտոնաթերթը, ազգային-գրական «Նայիրի» (1941 թվականից, մինչև 1952 թվականը՝ Հալեպում) պարբերաթերթը, մանկապատանեկան «Պատանեկան արձագանք» (1951 թվականից) ամսաթերթը, «Նոր կյանք» (1957 թվականից, անկանոն) պարբերաթերթը, ՀԲԸՄ Լիբանանի շրջանի հանձնաժողովի ազգային, գրական, հասարակական և տեղեկատվական «Խոսնակ» (1957 թվականից) պաշտոնաթերթը, գրական, գեղարվեստական, հասարակական «Սփյուռք» (1958 թվականից, անկանոն) հանդեսը, ՀՅԴ-ի և Համազգային մշակութային միության կենտրոնական վարչության «Բագին» (1962 թվականից) գրականության և արխիվայինի հանդեսը, Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոնի «Հայկազյան հայագիտական հանդես» (1970 թվականից, անկանոն) տարեգիրքը, հասարակական-քաղաքական, գրական «Կանչ» (1971 թվականից, անկանոն) շաբաթաթերթը:

Պարզվել է, որ Լիբանանում բացի հայերեն լեզվով թերթերից հրատարկվել են նաև այլ լեզուներով պարբերականներ, օրինակ 1973 թվականին արաբերեն հիմնական թերթերն են եղել՝ «Ալ-Ամալ» (Հույս, 1939թ-ից), «Ալ-Անվար» (Լույս, Շող, 1959թ-ից), «Ալ-Զարիդա» (Թերթ, 1953թ-ից), «Ալ-Մուհարիր» (Խմբագիր, 1951թ-ից), «Ալ-Հայաթ» (Կյանք, 1946թ-ից), «Ալ-Անբա» (Լուրեր, 1953թ-ից), ԱՍԿ-ի

օրգան, «Ան-Նահար» (Ցերեկ, 1933թ-ից), «Ան-Նիդա» (Կանչ, 959թ-ից, Լիբանանի կոմկուսի օրգանն է), «Ալ-Բայրակ»/ Դրօշ/, անգլերեն՝ «Դեյլի սթար» («The Daily star») (1952-ից), ֆրանսերեն՝ «Օրյանժուր» («L'orient-le lour») (1971թ-ից): Արաբերեն հանդեսներն են «Ալ-Լիվա», «Ալ-Զ/ Ջ/ումհուր ալ Ջադիդ» (1937թ-ից), «Ալ-ուսբու ալ-Արաբի» (1959թ-ից), «Ալ-Հուրրիյա» (Ազատութիւն, 1960թ-ից), «Ալ-Ախբար»/ Լուրեր/, «Աթ-Թարիք» (Պատմութիւն, 1941թ-ից, օրգան խաղաղության կողմնակիցների Լիբանանի կոմիտեի): Օտարագիր թերթերը նույնպես անդրադարձել են հայ համայնքի հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքին: Բեյրութում ազգային տեղեկատու գործակալությունը հիմնադրվել է 1962 թվականին:

Լիբանանում հրատարակված ամսագրերը և պարբերականները ունեցել են գաղութի կյանքում կարևոր նշանակություն. այդ առիթով Կարո Գանթարճյանը նշել է. «Հին ժամանակներից ի վեր գաղութը ունեցել է իր առաջնորդող մամուլը, որը այժմ Սփյուռքի հայ մամուլի մեջ թե իր բովանդակությամբ, և թե իր ծավալով գտնվում է առաջին գծում» **(Վարժապետեան Ս., 1983)**:

1927թ. Հայկ Պալյանը սկսեց հրատարակել «Ազդակ» թերթը: Այդ մասին «Ազդակ» թերթում կարդում ենք. «Պարոն Հայկ Պալյանը, ով մաս է կազմում «Նոր Փյունիկ» ընտանիքի, որպես վարչական պաշտոնյա մեծապես մտահոգված է հայերեն թերթի հրապարակմամբ: Քաջալերված լինելով իր ընկերներով, ովքեր նաև գաղափարակիցներ էին, ձեռնամուխ եղան «Ազդակ»-ի հրապարակման՝ որպես եռօրյա շաբաթաթերթ, հանձն առնելով մեծ զոհողությունների, որոնք հատկապես առաջին տարիներին մեծ չափերի կհասնեին» **(Վարժապետեան Ս., 1983)**: Այնուհետև նշվում է ձեռնարկն սկսելուց առաջ ունեին միայն մի սնդուկ տառեր, մի քանի հնացած տպագրական գույք և ձեռքի տպագրական փոքր մեքենա, իսկ խմբագրատունն էլ նախկին ժողովրդական տան ներքևի հարկն էր զբաղեցնում, որը նախկին ձկնարանի փողոցի վրա էր, աստիճանների տակ, փոքրիկ բանտի մեջ: Այս գործին մեծ աջակցություն են ցուցաբերել դոկտոր Բ. Ջուլաքյանը և Արամ Սահակյանը:

Սկզբնական շրջանում «Ազդակը» Բեյրութի մեջ ուներ ընդամենը մի քանի հարյուր բաժանորդ, որոնք տարեկան հինգ ոսկի էին վճարում: 1930 թվականին մեծ ժողովրդավարության շնորհիվ այն դարձավ երկօրյա և մի քանի տարի հետո սկսեց հրապարակվել որպես մեծածավալ օրաթերթ: Այն ուներ իր տպարանը: Տարբեր տարիներին խմբագրության մաս են կազմել Արամ Սահակյանը, Վարդան Գևորգյանը, Գասպար Իփեկյանը, Անդրանիկ Ծ. Ներսես Քիոփելյանը, Արսեն Գանթարճյանը, Մանուկ Ա. Զարեհ Զարգուն և Տիգրան Ոսկանին: Այն դեպքում, երբ տեղացիների տրամադրությունները հակասական էին, «Ազդակը» մեծ դեր ունեցավ սիրաշահելու տեղի մամուլի որոշակի ներկայացուցիչներին **(Վարժապետեան Ս., 1983)**: Հրատարակելով արաբերեն թերթերի մեջ հայանպաստ հոդվածներ, արաբների մեջ հայերի նկատմամբ դրական հանրության կարծիք ստեղծվեց: Այդ ժամանակ Սիրիայից և Լիբանանից դեպի արևմտյան երկրներ արտագաղթելու մեծ հոսք կար. «Ազդակը» պայքարեց նաև արտագաղթը դադարեցնելու համար: Այն գաղութի մեջ նպաստում էր նաև մշակութային և բարեգործական կազմակերպությունների գործունեությանը **(Վարժապետեան Ս., 1983)**:

«Ազդակը» նաև հայ մտավորականության ժամադրավայր էր, աշխատակիցների քանակը հարյուրից անցնում էր:

«Ազդակի» 25-ամյակի առթիվ նշվում էր, որ այդ ընթացքում հրատարակվել է պարբերականի վեց հազար համար՝ չորսական էջով: Այդ ընթացքում գրվել է չորս հազար հինգ հարյուր խմբագրական, տասներկու հազար հոդված, տպվել է հազար հատոր, երկուհարյուրէջանոց գրքեր և այլն:

«Ազդակի» առաջին համարը լույս է տեսել 1927 թվականի մարտի 5-ին որպես անհատական ձեռնարկ և վայելում էր հայ դաշնակցության բարոյական օժանդակությունը և հեղինակությունը՝ իր կողքին ունենալով այդ կուսակցության հավատավոր զանգվածների աջակցությունը: «Ազդակի» 25 ամյակին նվիրված Շահեն Տերտերյանի հեղինակությամբ հոդվածում նշված է. «Արդար եւ անաչառ ըլլալու համար պէտք է ըսենք, թե «Ազդակ» իր 25 տարուան գոյութեան ընթացքին

անշուշտ ունեցաւ սխալներ, բայց նույն ատեն պէտք է ընդունինք, որ իր ուղղութեամբ ենթակայ ըլլալով Հ. Յ. Դաշնակցութեան հակակշռին, ստիպուած էր ոմանց համար ոչ հաճելի թիւրիմացութեան մէջ գտնվել» **(Վարժապետեան Ս., 1983)**:

«Ազդակն» իր գոյության ընթացքում մեծ հաջողություններ գրանցեց և տարբերվում էր այլ հայ լրագրերից ոչ այն պատճառով միայն, որ թերթի իմիջը բարձրացավ կամ բաժանորդների թիվը շատացավ, այլ եղավ ժամանակ, որ հրատարակվեց նաև «Ազդակ մարզական» «Ազդակ շաբաթօրյա» և «Ազդակ գրական» վերտառությամբ պարբերականներ: «Ազդակն» իր գոյությամբ և արձանագրած նյութական հաջողությամբ քայքայեց այն կարծրատիպը, թե հայ լրագրության հրատարակման միջոցով ֆինանսական օգուտ հնարավոր չէ ունենալ: «Ազդակի» հրատարակումից հիսուն տարի առաջ Թիֆլիսում Գրիգոր Արծրունին իր պապենական ամբողջ հարստությունը սպառել էր իր կողմից հրատարակվող օրաթերթը պահելու համար, այնինչ «Ազդակի» տերն ու տնօրեն Հայկ Պալյանը մեծ հաջողություններ է արձանագրել նաև նյութական շահույթի հետ կապված. նա առաջին հայերից եղավ, որ այդ ժամանակ գնեց ինքնաշարժ և ունեցավ սեփական տուն ու տեղ **(Վարժապետեան Ս., 1983)**:

«Ազդակի» այս հաջողությունը արդյունք էր ոչ միայն կուսակցության նեցուկ լինելուն, այլ նաև Հայկ Պալյանի ձեռներեցության, աշխատասիրության և աննկուն կամքի: «Ազդակի» համարներում լույս տեսած նյութերը հարուստ գանձեր են Մերձավոր Արևելքի հայ գաղութի ազգային կյանքի մասին (**Վարժապետեան Ս., 1983**):

«Ազդակ», օրաթերթը մինչև 1932թ. եռօրյա էր, ապա երկօրյա: 1965թ. հունիսից ՀՅԴ Լիբանանի պաշտոնաթերթն է: Խմբագիրներն են եղել Արամ Սահակյանը, Վարդան Գևորգյանը, Մանուկ Ասլանյանը, Մուշեղ Իշխանը, Կարո Սասունին, Գասպար Իփեկյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Ներսես Քյուփելյանը, Արսեն Աճեմյանը, Հակոբ Սիմոնին, Կարո Գանթարճյանը, Զարեհ Զարգունը, Մինաս Թյոլյոլյանը, Լևոն Գարմենը, Տիգրան Ոսկունին, Երվանդ Փամփուքյանը,

Պողոս Սնապյանը, Վարանդ Փափազյանը, Վարուժան Թենպելյանը, Սարգիս Մահսերեճյանը, Շահան Գանտահարյանը (2002-ից): Թերթը նաև լուսաբանում է Լիբանանում, մերձավորարևելյան տարածաշրջանում և ՀՀ-ում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, գիտական, մշակութային, մարզական կարևոր իրադարձությունները, անդրադառնում միջազգային անցուդարձներին, իսկ 1970-ական թթ. կեսից, մերձավորարևելյան ճգնաժամի պայմաններում, համայնքի քաղաքական մյուս ուժերի հետ պայքարում է Լիբանանի և հայկական մյուս գաղթավայրերի հայությանն սպառնացող ձուլման վտանգի դեմ, հանդես է գալիս հանուն հայապահպանության, Հայ դատի արդարացի լուծման: Ներկայում հայ տպագիր մամուլի առաջատարներից է: Հրատարակում է բացառիկ համարներ՝ նվիրված ազգային և կուսակցության նշանակալի հոբելյաններին, ինչպես նաև Ամանորի առիթով: Ունեցել է «Հարդագող», «Ազդակ- շաբաթօրեակ», «Ազդակ-մարզական» և այլ հավելվածներ: «Ազդակ- շաբաթօրեակ»-ի (հիմնադրվել է 1944թ մարտի 3-ին և գործել մինչև 1952թ) խմբագրական կազմում ընդգրկվել են Ա. Լեյլանին/Մովսես Տեր Գալուստեան/, Մուշեղ Իշխանը, իսկ գլխավոր խմբագիրը Կարօ Սասունին էր: Շաբաթաթերթը իր մեջ ամփոփում էր հիմնականում աշխարհամարտին և նրա հետևանքներին առնչվող հին և նոր հեղինակների մտորումները: Փաստորեն շաբաթաթերթը կատարում էր և լուսավորչական, և մասնագիտական փորձի ձեռք բերման հարթակի դեր **(Այվազյան Հ, 2015)**:

Լիբանանի հայ համայնքում երկրորդ կարևոր թերթը **«Արարատ»**-ն էր, որը հրատարակվել է խմբագրությամբ Միհրան Աղազարյանի, արտոնատեր ունենալով Ենովք Տարտաղանյանին **(Վարժապետեան Ս., 1983)**: Այն սկզբում երկօրյա շաբաթաթերթի ձևաչափ ուներ: Առաջին համարը լույս է տեսել 1933թ. հոկտեմբերի 12-ին: Այս առիթով մեջբերենք. «Արարատում» տպված հետևյալ դրվագը. «1933թ. հնչակյան կուսակցության Լիբանանի վարիչ մարմինը կարողանում է գնել հանգուցյալ Միքայել Շամտանճյանի «Հայ կյանք»-ի տպարանը, իր ամբողջ աշխատակիցներով և սարքավորումներով Միհրան Տամատյանից» **(Վարժապետեան Ս., 1983)**: Նույն թվականի հոկտեմբերի 11-ին

Աղազարյանը սպանվում է և թերթի հաջորդ համարները դադարեցվում են հրատարակվել: Շրջանի վարիչ մարմինը կարողանում է «Արարատը» լույս ընծայել նույն 1937թ. նոյեմբերի 7-ին, Ա.Էլոյանի պատասխանատվությամբ և Ա. Կիտուրի խմբագրությամբ, որի արտոնատերը Գրիգոր Հաճնյանն էր: Այդ թվականի «Արարատ»-ը հրատարակվում էր որպես Սիրիայի և Լիբանանի հնչակյան կուսակցության օրգան **(Վարժապետեան Ս., 1983)**:

Այս թերթը նույնպես բազմաթիվ վայրիվերումներ է ունեցել: Տնտեսական խնդիրների հետ կապված պետության կողմից թերթը մի քանի անգամ փակվել է: Սակայն «Արարատն» էլ ի վերջո «Ազդակի» նման գտավ իր մեկենասին՝ հանձին Օնիկ Ճամպուլյանի: Նրա վարչական բացառիկ կարողությունների և տքնաջան աշխատանքի շնորհիվ «Արարատը» հասավ հանրության կողմից բարձր գնահատանքի **(Վարժապետեան Ս., 1983)**:

1939 թվականի երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով «Արարատ»-ի լույս ընծայումը դադարեցվել է մինչև 1941 թվականի օգոստոս ամիսը: 1981 թվականից «Արարատ»-ի խմբագիրն է եղել Ժիրայր Նաիրին **(Այվազյան Հ., 2015)**: Ներկայումս ՍԴՀԿ կենտրոնական վարչության և Լիբանանի շրջանի պաշտոնաթերթն է: Թերթի խմբագիրներ են եղել՝ Օննիկ Ճամպուլյանը, Արմենակ Էլոյանը, Արսեն Կիտուրը, Միհրան Սեֆերյանը, Արմեն Ղարիպը, Վահան Տոնապետյանը, Հովսեփ Ճիռյանը, Ասատուր Էլճանյանը, Հրանտ Գանգրունին, Ժիրայր Նայիրին, Ավետիս Փոշօղլյանը, Ահարոն Շխրտմյանը, Անի Եփրեմյանը **(Վարժապետեան Ս., 1983)**: Թերթը լուսաբանել է ՍՀԴԿ-ի գործունեությունը, անդրադարձել է արևմտահայության պատմության ճակատագրին, ծանոթացնում է ՀՀ, ԼՂՀ, Սփյուռքի և Լիբանանի հասարակական քաղաքական, տնտեսական, գիտական, մշակութային և մարզական կարևոր իրադարձություններին, վերլուծում միջազգային անցուդարձը: Երբեմն հրատարակում է հոբելյանական բացառիկ համարներ (նաև արաբերենով): Ունեցել է «Արարատ շաբաթօրեակ» (1949-54, խմբագիր՝ Հակոբ Պարսումյան), «Արարատ գրական», «Արարատ մարզական» (1956-58, 1992-ին,

խմբագիրներ՝ Գևորգ Տարոնի, Գրիգոր Քյոշկերյան, Կարո Գոճավագյան, Ա.Փոշօղլյան) և «Արարատ երիտասարդական» (1985-92, խմբագիրներ՝ Եղիկ Ճերեճյան, Ա. Փոշօղլյան) հավելվածները **(Վարժապետեան Ս., 1983)**:

«Զարթոնք» ազգային, քաղաքական, հասարակական, գրական օրաթերթը սկսվել է հրատարակվել 1936 թվականից, խմբագիրն է եղել Վահան Թեքեյանը: Թերթը ղեկավարել է ՌԱԿ գործիչ Միհրան Տամատյանը: Գործընթացին օժանդակել են Հմայակ Գրանյանը, Մկրտիչ Մսրլյանը, Յ. Օզզատյանը, Տ. Տարագճյանը, Ներսես Շիրինյանը, Միքայել Նաթանյանը: Հատկապես արժանին պետք է մատուցել Մկրտիչ Մսրլյանին, ով ամբողջ ընթացքում նյութական մեծ աջակցություն ընծայեց թերթի հրատարակմանը **(Վարժապետեան Ս., 1983):** Ձեռնարկը կուսակցական էր, հետևապես գործին լծվեցին կուսակցական գործիչները. վերջիններս ունեին իրենց համակիրները, որոնք նույնպես սկսեցին օժանդակել գործընթացին: Նրանցից մեկն էլ Սիսակ Վարժապետյանն էր, ում առաջին «Սարսափների գիրքը» լույս էր տեսել 1933թ.: Միհրան Տամատյանի նվիրումով գոտեպնդվելով և ներշնչվելով Վահան Թեքեյանի անձով՝ Վարժապետյանը հարեց «Զարթոնքին» և նրա ստեղծագործությունները Թեքեյանի բովով անցնելուց և նրա քննադատությանը ենթարկվելուց հետո սկսեցին տպագրվել: «Զարթոնքը», ևս լինելով կուսակցական օրգան, վայելեց թե՛ կուսակցական, թե՛ համակիրների և բարեկամների աջակցությունը: «Զարթոնքն» էլ է ունեցել իր տագնապալի օրերը նյութականի և խմբագիրների պակասի ձևով: Թեքեյանից հետո խմբագրական պաշտոններ վարեցին Հովհաննես Պողոսյանը, Լևոն Թութանջյանը, Գրիգոր Պեքերեջյանը և այլք, այնուհետև հերթը հասավ Գերսսամ Ահարոնյանին, ով ղեկավարում էր թերթը երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Այնուհետև «Զարթոնքի» խմբագիրն է եղել ԵՊՀ շրջանավարտ Յ. Ավետիքյանը **(Վարժապետեան Ս., 1983)**: «Զարթոնքը» հայ գաղութի մեջ ստեղծեց երրորդ ուժը. առաջինը դաշնակցությունն էր, երկրորդը հնչակյան կուսակցությունը, իսկ երրորդը Ռամկավար ազատական կուսակցությունը, փաստորեն այն ՌԱԿ-ի

կենտրոնական վարչության պաշտոնաթերթն էր, լույս էր տեսնում Բեյրութում ընդհատումներով 1937 թվականից: Խմբագիրներն են եղել՝ Վահան Թեքեյանը, Լևոն Թյությունճյանը, Երվանդ Քեշիշյանը, Հովհաննես Պողոսյանը, Հակոբ Դավթյանը, Միքայել Նաթանյանը, Գրիգոր Պեքերեճյանը, Համբարձում Գումրույանը, Գերսամ Ահարոնյանը, Հակոբ Ավետիքյանը, Պարույր Աղպաշյանը, Պայծիկ Գալայջյանը (2008-ից): Ներկայացնում էր ՌԱԿ ծրագրերը, լուսաբանում Լիբանանի, ՀՀ և միջազգային, քաղաքական, տնտեսական ու մշակութային անցուդարձը, սփյուռքահայ համայնքների կյանքը, անդրադառնում է ազգապահպան, եկեղեցիական, երիտասարդության հարցերին, ջատագովում հայրենադարձությունը, օժանդակում Հայրենիք - Սփյուռք կապերի ամրապնդմանը: Բացի «Զարթոնքը», լույս է ընծայվել նաև «Զարթօնք սփոր» (1955-57թթ, 1959թ., խմբագիր՝ Վարուժան Պետիկյան) և «Ալ-Յաքզա» (արաբերեն՝ «Զգոնություն», 1957-1958թթ.) հավելվածները: Թողարկվում են նաև այլ բացառիկ համարներ **(Այվազյան Հ, 2015, Վարժապետեան Ս., 1983)**:

Երկար ժամանակ կար կարծիք, որ թերթ կամ պարբերական հրատարակելու համար անհրաժեշտ է որևէ կուսակցության կամ կազմակերպության հովանավորությունը: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ այդ կարծիքը թյուր էր: Անդրանիկ Ծառուկյանն իր «Նայիրի»-ով, Սիմոն Սիմոնյանը «Սփիւռքով»/, Սիրան Սեզանը «Երիտասարդ հայուհիով» ապացուցեցին, որ եթե հրատարակչության ղեկավարն ունի տակտ, անկեղծություն, հարատևելու կորով, կարելի է օրաթերթ կամ պարբերաթերթ հրատարակել առանց այլոց աջակցության: Դրա լավագույն օրինակը **«Այգն»** էր: 1952թ. «Այգը» սկսեց հրատարակվել Բեյրութում որպես օրաթերթ Լյուսի Թոսպաթի խմբագրապետությամբ. /Արտաշես Տէր Խաչատուրեանի աշխատության մեջ օրաթերթի սկիզբ նշված է 1953թ. մարտի 7-ը **(Տեր Խաչատուրեան, 2014)**: Ճիշտ է, «Այգը» որևէ կուսակցությամբ հովանավորությամբ չէր հրատարակվում, սակայն չպետք է մոռանալ, որ այն լույս տեսավ «Լը. Սուար» ֆրանսիատառ օրաթերթի տպարանից, որի տերը և տնօրենը Տիգրան Թոսպաթն էր, ում միջոցներով էլ

տպվում էր թերթը: Ժամանակը ցույց տվեց, որ այն անհրաժեշտություն էր: Թերթը նպատակադիր էր «հայկական կարծիքը առաջնորդել եւ զայն մղել աւելի մօտէն շահագրգռուելու Լիբանանի զարգացման համար էական նկատուող հարցերով» **(Տեր Խաչատուրեան, 2014)**: 1953-75թթ. «Այգի» խմբագիրներ են եղել Երվանդ Կոպելյանը, Եղիա Նաճարյանը, Մինաս Թյոլյոլյանը, Նազարեթ Պերթիզյանը, Շահանդուխտը: Թերթում ներկայացրել են Լիբանանի, Հայաստանի, ինչպես նաև միջազգային քաղաքական անցուդարձերը, տպագրվել են տնտեսական, մշակութային, մարզական լուրեր, գրական հոդվածներ, գեղարվեստական ստեղծագործություններ: «Այգին» աշխատակցել են Խ.Գաբիկյանը, Մուշեղ Իշխանը, Տ.Աճեմյանը, Ն. Պեշիկթաշլյանը, Հ. Մնձուրին, Մ.Կյուրճյանը, Ս. Շահպազը, Մ.Սևակը, Ջ.Մարտիկյանը և ուրիշներ: Թերթը հրատարակվել է 1973-1974թթ. և դադարել է հրատարակվել Լիբանանի քաղաքացիական կռիվների պատճառով **(Վարժապետեան Ս., 1983)**, բացի դա թերթն ունեցել է աշխատակիցների խիստ պակաս **(Տեր Խաչատուրեան, 2014)**:

Իսկ Հ. Բ. Ը. միության հայ երիտասարդական ընկերակցության հրատարակած **«Ծիածան» (Լևոնյան Գ. , 1934)** գրական պարբերաթերթը տասը տարի 1939-1949թթ. Բեյրութում իր տեսակի մեջ գրեթե միակ հրատարակությունն էր, որ քաջալերում էր հայ երիտասարդներին գրականությամբ հետաքրքրվելու: ՀԲԸՄ Հայ երիտասարդաց ընկերակցության գրասեր երիտասարդների միության հրատարակությունն էր: Թերթի խմբագիրն էր Բյուզանդ Եղիայանը: Կարևոր էր Գրիգոր Կիուլյանի, Գրիգոր Բեկմեզյանի, Պարգև Շահպազի և Ստեփան Ալաջաջյանի դերը, որոնք հետագայում գաղթեցին Հայաստան: Պարբերաթերթում մեծ տեղ է հատկացվել հայ գրողների գործերին, տպագրել է նաև օտարազգի գրողների ստեղծագործություններից, խիստ կարևորվել են նաև պատմաբանասիրական և գեղագիտական հոդվածները: Թերթին աշխատակցել են Գ. Հովսեփյանը, Վ. Թեքեյանը, Հ. Օշականը, Շ. Պերպերյանը և ուրիշներ **(Այվազյան Հ, 2015)**:

1944–1960թթ. Բեյրութում լույս է տեսել **«Ակօս»** գրական գեղարվեստական երկամսյա պարբերագիրքը, որը 1953 թվականից հրատարակվում է ամսագրի ձևով: Համազգային մշակութային միության Հայ ճեմարանի շրջանավարտների հրատարակությունն էր այն: Խմբագիրներն են եղել՝ Գառնիկ Բանյանը, Հարություն Գեղարդը, Աշոտ Նուրյանը, Հակոբ Ժամկոչյանը, Շաքե Տեր-Մելքոնյանը: Հրատարակել է արձակ և չափածո գեղարվեստական ստեղծագործություններ, պատմաբանասիրական ուսումնասիրություններ, մշակութային նորություններ, համաշխարհային գրականության լավագույն նմուշների թարգմանություններ, լուսաբանել է միության գործունեությունը: Լիբանանահայ միակ հանդեսն է, որ պատմագրական ուսումնասիրություններին լայն տեղ է տվել, հատկապես տպագրվել են Գառնիկ Գիուզելեանի գիտական հոդվածները **(Տեր Խաչատուրեան Ա. , 2014)**: Աշխատակցել են Գ. Հովսեփյանը, Լ. Շանթը, Ն. Աղբայյանը, Գ. Իփեկյանը, Հ/Հակոբ/. եւ Վ/Վահե/. Օշականները, Համաստեղը, Ս. Վրացյանը, Վ. Նավասարդյանը և ուրիշներ **(Այվազյան Հ. , 2015)**: **«Ակօս»**-ի դադարումով սկսվեց **«Բագին»** թերթի հրատարակումը:

Բեյրութի ՀՅԴ բյուրոյի և Համազգայինի կենտրոնական վարչության հրատարակչությունում 1962թ.–ից մինչև 1989թ.՝ ամենամսյա, 1989–94թթ.–ին՝ երկամսյա, հետագայում նաև եռամսյա ձևաչափով լույս է տեսել **«Բագին»** գրականության և արվեստի հանդեսը: Խմբագիրներն են եղել՝ Կարո Սասունին, Պողոս Սնապյանը, Հակոբ Պալյանը: Հանդեսում հրատարակում են արևմտահայ և արևելահայ հեղինակների գործեր, արաբ և ճանաչված օտարազգի այլ գրողների արձակ ու չափածո ստեղծագործությունների թարգմանություններ, հայ միջնադարյան, նոր և նորագույն գրականության խնդիրներին վերաբերող հոդվածներ և ուսումնասիրություններ, մշակութային նյութեր: Այստեղ ներկայացվել են նոր անուններ, նոր հրատարակություններ: Բացառիկ համարներ են նվիրվել Սայաթ-Նովային, Ա. Բակունցին, Համաստեղին, Հ. Շիրազին, Պ. Սևակին: Աշխատակցել են Է. Պոյաճյանը, Տ. Ոսկունին, Բ. Փափազյանը, Ն.

Պարթևյանը, Ժ. Աթթարյանը, Վ. Օշականը, Հ. Պերպերյանը, Ս. Կիրակոսյանը և այլք **(Այվազյան Հ. ,2015)**:

1946–55թթ. Բեյրութում ընդհատումներով լույս է տեսել նաև **«Անի»**, գրականության և արվեստի ամսագիրը, որի խմբագիր-հրատարակիչն էր Վահե Վահյանը, այն չի ունեցել պաշտոնական հովանավորություն և օժանդակություն **(Տեր Ղաչատուրեան Ա. , 2014)**: Տպագրել է հայ և օտար գրողների գործեր, անդրադարձել խորհրդահայ գրականության զարգացման ուղիներին, զգալի տեղ է հատկացրել բանասիրական, գրաքննադատական, մշակութային հոդվածներին, լուսաբանել սփյուռքահայ աշխատավորության կյանքը: «Հրատարակել է լուրջ ուսումնասիրություններ հայ ճարտարապետության և գեղարվեստի վերաբերյալ» **(Տեր Ղաչատուրեան Ա. , 2014)**: Նպաստել է Հայրենիք - Սփյուռք մշակութային կապերի ամրապնդմանը: Ունեցել է «Անի» մատենաշար: Ամսագրին աշխատակցել են Ս. Տերունյանը, Զ. Մելքոնյանը, Դևը, Բ. Թոփալյանը, Ս. Փանոսյանը, Ա. Անդրեասյանը, Տ. Վարժապետյանը, Զ. Որբունին, Հ. Զարդարյանը, Գ. Սևանը, Ա. Դարյանը և ուրիշներ **(Այվազյան Հ. , 2015)**:

Բեյրութի մշակութային կյանքում արժևորվում է նաև **«Երիտասարդ հայուհի»** խորագրով, գրական գեղարվեստական երկշաբաթաթերթը, որը հետագայում դարձավ ամսագիր: Այն լույս է տեսել 1932–1934թթ. և 1947–1968թթ.: Հիմնադիր տնօրենը և խմբագիրն էր Սիրան Սեզանը (Զարիֆյան): Ինչպես թերթը, այնպես էլ ամսագիրը, կարևորել են սփյուռքում հայապահպանության մեջ հայ կնոջ դերը, ներկայացրել գիտության և մշակույթի ոլորտների նշանավոր հայուհիներին, լիբանանահայ կյանքի նշանակալի նորությունները: «Այս էջերեն հայ կինը պիտի կարենայ վերագտնել ոգեղէն լինելութեան այն բոլոր տուեալները, որոնք իրեն են եղած անցեալին մէջ: Այս էջերէն հայ կինը նոր արժէքաւորումի եւ հետեւաբար նոր գնահատումի պիտի տանի իր դերն ու դիրքը հայ պատմութեան, հայ մշակոյթին, հայ կրօնքին ու հայ անունին հետ դէմ առ դէմ» **(Տեր Խաչատուրեան Ա. , 2014)**: Առաջին շրջանում (1932–1934թթ) թերթին աշխատակցել են միայն տղամարդիկ՝ Վ. Վահյանը, Շ.

Պերպերյանը, Մ. Տամատյանը և ուրիշներ, իսկ հետագայում նաև կին գրողներ, արվեստագետներ, հասարակական գործիչներ՝ Շ. Գույումճյանը, Յ. Աճեմյանը, Ս. Դավիթյանը, Բ. Նաճարյանը, Հուրին և այլք **(Այվազյան Հ. , 2014)**:

Բավականին երկար ժամանակ՝ 1971–2006թթ. Բեյրութում լույս է տեսել **«Կանչ»,** հասարակական քաղաքական և գրական շաբաթաթերթը /1983–95թթ «Ազգային մշակույթ»/, որպես Լիբանանի կոմկուսի «Ալ-Նիդա»/Կանչ/ արաբերեն թերթի հայերեն հավելված: Խմբագիրներն են եղել՝ Հարություն Մադեյանը, Պողոս Թյությունճյանը, Գառնիկ Ադդարյանը, Պարույր Երեցյանը: Այն արտահայտել է Լիբանանի կոմկուսի և հատկապես նրա հայազգի ճանաչված անդամների տեսակետները, անդրադարձել է նաև ՀԿԿ գործունեությանը: Թերթը լուսաբանել է ՀՀ–ում, ԼՂՀ–ում, Լիբանանում և աշխարհում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական անցուդարձերը, տպագրել է նաև գրական էջեր, արվեստի հարցերին նվիրված նյութեր, մարզական լուրեր **(Այվազյան Հ. ,2015)**:

Լիբանանի հասարակական կյանքում կարևոր դերակատարություն է ունեցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնական **«Հասկ»** կրոնական, գրական և բանասիրական ամսագիրը: Այն լույս էր տեսնում 1932 թվականից Անթիլիասում: Հիմնադիր խմբագիրն էր Մեծի Տանն Կիլիկիո Աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը, ով աշխատեց մինչև 1936 թվականը, այնուհետև ի պաշտոնե պատասխանատու խմբագիր էին համարվում բոլոր գահակալ կաթողիկոսները: Սկզբնական շրջանում ունեցել է առավելապես տեղեկագրական բնույթ. հրապարակել է կաթողիկոսարանի որոշումները, զեկույցները, կոնդակները, իսկ 1940–ական թվականներից մեծ տեղ է հատկացնում կրոնաեկեղեցական թեմաներով հոդվածներին, տպագրում է նաև հայագիտական, պատմաբանասիրական նյութեր, գրական գեղարվեստական ստեղծագործություններ **(Այվազյան Հ. , 2015)**:

«Մասիսը» նույնպես կրոնական, հասարակական, քաղաքական, գրական ամսաթերթ էր: Հայ կաթողիկե պատրիարքության հրատարակությունն է: Լույս է տեսնում 1947-ի հունվարի 1-ից Բեյրութում: Խմբագիրներն են եղել՝ Հարություն

վրդ. Թեքեյանը, Ռափայել վրդ. Պայանը, Մեսրոպ վրդ. Թերզյանը, Վարդան վրդ. Թեքեյանը, Անդրանիկ վրդ. Կռանյանը: Թերթը երկար ժամանակ խմբագրել է Հրաչ Քաջարենցը **(Տեր Խաչատուրեան Ա. , 2014)**: Մեծ տեղ է հատկացնում սփյուռքահայ համայնքների, ՀՀ-ի, ինչպես նաև Մխիթարյան միաբանության կրթության, մշակութային, կրոնական կյանքի լուսաբանմանը, ներկայացնում է միջազգային անցուդարձը: Քարոզում է հայ քաղաքական կուսակցությունների համերաշխություն: Հոդվածներ էր հրապարակում Սայաթ-Նովայի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի, Ա. Իսահակյանի, Պ. Սևակի, Դ. Դեմիրճյանի, Սարմենի, Ա. Վշտունու, Գ. Էմինի և ուրիշների մասին, տպագրում հայ և օտարազգի գրողների ստեղծագործություններ **(Այվազյան Հ. , 2015)**:

Յուրահատուկ առաքելություն էր իրականացնում **«Նայիրի»** շաբաթաթերթը, որը լույս էր տեսել 1941–2013թթ., մինչև 1949 թվականը՝ Հալեպում՝ որպես գրականության և արվեստի ամսագիր, իսկ 1951–1983թթ. և 1995 թվականից՝ Բեյրութում՝ որպես ազգային գրական շաբաթաթերթ **(Այվազյան Հ. , 2015)**: Խմբագիրներն են եղել՝ Անդրանիկ Ծառուկյանը, Ժիրայր Նայիրին (Թոսունյան, 1995 թվականից): Այն գործուն դեր է կատարել սփյուռքի ազգային, հասարակական կյանքում, անդրադարձել հայոց պատմության կարևոր անցքերին, նպաստել է հայրենիք սփյուռք կապերի ամրապնդմանը, մեծ տեղ է հատկացրել Հայաստանի սոցիալտնտեսական և կրթամշակութային կյանքին: Թերթը մեծապես նպաստել է սփյուռքահայ գրականության զարգացմանը, գրական քննադատական մտքի հասունացմանը, արվեստի արժեքների տարածմանը, տպագրել է նաև հայ գրողների (Ե. Չարենց, Գ. Մահարի, Հ. Շիրազ, Հ. Քոչար, Գ. Սարյան, Ս. Կապուտիկյան, Սարմեն և ուրիշների գործեր, անտիպ նամակներ, փաստաթղթեր, հուշեր, թարգմանություններ, լուսաբանել արվեստի նորություններ, ցուցահանդեսներ: Թղթակցել են Համաստեղը, Վահե Վահյանը, Մուշեղ Իշխանը, Արսեն Երկաթը, Կ. Զարյանը, Շ. Շահնուրը: 1971 թվականին հրատարակվել է «Նայիրի» 30-ամյակին նվիրված մեծածավալ

բացառիկ համար: 1995 թվականից թերթը լույս է տեսել երկշաբաթյա պարբերականությամբ **(Այվազյան Հ. , 2015)**:

Բեյրութում եզակի կարևորությամբ մանկապատանեկան երկշաբաթաթերթ էր **«Պատանեկան արձագանքը»,** որը լույս էր տեսնում 1936 թվականից, իսկ 1973 թվականից այն դարձավ ամսաթերթ, որը հրատարակվում էր Հայ ավետարանական քրիստոնեական Ջանից միության հրատարակչության կողմից: Խմբագիրներն են եղել՝ Մանասե Շնորհոքյանը, Լևոն Սիմոնյանը, Պարգև Տարագչյանը, Ժաներթ Քասունին, Փոլ Ներսեսյանը, Արամ Սարգիսյանը, Տիգրան Յումուշաքյանը, Երվանդ Քասունին (1993–ից): Թերթը տպագրում էր հոգևոր, պատմական, գիտական, մարզական, մշակութային թեմաներով հոդվածներ, լուրեր: Մեծ տեղ էր հատկացնում պատանիների կամ նրանց համար գրված հայագիր թարգմանված արձակ ու չափածո գրական ստեղծագործություններին: 1940–1942թթ. ունեցել է «Կիրակնօրյա դպրոցի դասեր» հավելվածը **(Այվազյան Հ. , 2015)**:

Բեյրութի հասարակական կյանքում կարևոր դերակատարում է ունեցել մերձավոր արևելքի հայ ավետարանական քրիստոնեական Ջանից ընկերակցության հրատարակչության կողմից հրատարակվող **«Ջանասէր»,** կրոնական, գրական, հասարակական պարբերաթերթը: Այն լույս էր տեսնում 1937 թվականից Բեյրութում (նախ՝ եռամսյա հավելված «Պատանեկան արձագանգ»–ի, ապա՝ երկամսյա, ամսաթերթ, 1951–74թթ.՝ երկշաբաթաթերթ, 1975–ից՝ կրկին ամսաթերթ): Խմբագիրներն են եղել՝ Բյուզանդ Գալֆայանը, Տիգրան Քասունին, Բյուզանդ Ռուպյանը, Մանասե Շնորհոքյանը, Պարգև Տարագճյանը, Եսայի Սարմազյանը, Արամ Սարգիսյանը, Տիգրան Յումուշաքյանը, Երվանդ Քասունին (1991թվականից): Թերթը լուսաբանում էր հայ ավետարանական եկեղեցու գործունեությունը, հրատարակում էր հասարակական, պատմամշակութային լուրեր և հոդվածներ **(Այվազյան Հ. , 2015)**:

Հայկական ժողովրդային շարժման հրատարակչության կողմից 1958 թվականից Բեյրութում (1990–ից՝ անկանոն պարբերականությամբ) լույս էր տեսնում նաև **«Սփյուռք»,** գրական, գեղարվեստական, հասարակական պարբերաթերթը, որի խմբագիրներն են եղել՝ Սիմոն Սիմոնյանը (հիմնադիր), Գևորգ Աճեմյանը, Գևորգ Յազըճյանը, Հովսեփ Արթինյանը, իսկ 2009 թվականից թերթը ունեցել է խմբագրակազմ: Թերթը անդրադառնում էր ՀՀ–ի, ԼՂՀ–ի և սփյուռքի հասարակական կյանքին, հայրենիք սփյուռք փոխհարաբերություններին, հայկական հարցին, արցախյան հիմնախնդրին, մերձավորարևելյան քաղաքական անցուդարձին, տպագրում էր նաև գեղարվեստական ստեղծագործություններ, մշակութային թեմաներով նյութեր **(Օգնայեան Ս. , 1984, Տեր Խաչատուրեան Ա. , 2014)**:

Երգիծանքի ժանրը ապահովելու նպատակով Բեյրութում 1951–1952թթ. լույս է տեսել **«Փարոս»,** երգիծական պատկերազարդ երկշաբաթաթերթը (ապա՝ շաբաթաթերթ): Խմբագիրներն են եղել՝ Բաբկեն Տեր–Գևորգյանը, Պետրոս Քիրեճյանը: Թերթը ծաղրել է գաղթավայրի հոռի բարքերը, տպագրել է նյութեր՝ նվիրված հայապահպանությանը և հայոց լեզվի անաղարտության հարցերին, անդրադարձել է նաև Լիբանանի ներքին քաղաքականությանը **(Այվազյան Հ. , 2015)**:

1955թ. սկսվեց հրատարակվել «Բժիշկ» վերնագրով միակ բժշկական ամսաթերթը, որը խմբագրում էին բժիշկներ Վարուժան Սահակյանը, Մելքոն Էպլիղաթյանը և Հարություն Գազանճյանը: Ամսաթերթը լույս էր տեսնում Լիբանանահայ Բժշկական միության միջոցներով: Իր բովանդակությամբ հանրամատչելի հրատարակություն էր՝ իրականացնում էր հասարակության մեջ բժշկական լուսավորչական գործառույթ **(Տեր Խաչատուրեան Ա. , 2014)**:

Բեյրութում լույս են տեսել նաև ժողովածուներ և ամսագրեր, ինչպիսիք են՝ «Ժողովածու գրականության և արվեստի», «Յառաջ», «Շիրակ» **(Տեր Խաչատուրեան Ա. , 2014)**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերը նշված մամուլը Լիբանանում հրատարակված ոչ բոլոր պարբերականները և թերթերն են, որոնք կարևորագույն գործիքակազմ են Սփյուռքում հայապահպանության, ազգային լուսավորչականության, օտար սոցիալական միջավայրում հարմարարվելու և տնավորվելու, ինչպես նաև հայ համայնքում արդյունավետ հաղորդակցում և կեցություն իրականացնելու համար:
2. Լիբանանի կառավարությունը այնտեղ ապրող հայերի, ինչպես նաև հրատարակվող պարբերականների նկատմամբ ուներ հարգալից և դրական վերաբերմունք, որն էլ նպաստել է մեծաթիվ ու որակով պարբերականների հրատարակմանը, նույնը չենք կարող ասել Օսմանյան Թուրքիայի մասին **(Խառատյան Ա.,1989, Խառատյան Ա. , 2015)**:
3. Լիբանանում հրատարակված հայ մամուլը հիմնականում կենտրոնացած էր Բեյրութում, քանի որ հայերը մեծ մասամբ ապրում էին Բեյրութում:
4. Հրատարակված թերթերը հիմնականում գտնվում էին որևէ կառույցի հովանու ներքո, և այդ կառույցի հզորությունից կախված էր տվյալ մամուլի հարատևությունն ու արժևորվածությունը:
5. Հրատարակվող թերթերի խմբագիրները տվյալ ժամանակաշրջանի ճանաչած գործիչներն և մտավորականներն էին:
6. Լիբանանի համայնքներում հրատարակվող մամուլը իրականացրեց հայապահպանության, դպրոցաշինության, առողջապահական և բազմաթիվ այլ գործառույթներ:
7. Հրատարակվող մամուլի միջոցով լիբանանահայ ընթերցողը ծանոթանում էր նաև Խորհրդային Հայաստանի իրականությանը և նվաճումներին:
8. Հրատարակված թերթերը հարթակ էին հայ և արտասահմանյան գրողների, արվեստագետների, գիտնականների ստեղծագործություններին ծանոթանալու համար:
9. Հրատարակվող օտարալեզու թերթերը ինչպես արաբ, այնպես էլ այլազգի ընթերցողներին ծանոթացրել են հայ ազգի ինագույն ծագումնաբանությանը,

մշակույթին, ինչպես արաբական աշխարհում, այնպես էլ միջազգային կյանքում ունեցած ձեռքբերումներին, անդրադարձել հայ համայնքի հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բաբլոյան Մ. (1965)**, Սփյուռքահայ մամուլի պատմությունից. «Անի» (1946–1955), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ. :
2. **Լևոնյան Գ. (1934),** Հայոց պարբերական մամուլը, Երևան, Մելքոնյան ֆոնդի հրատ:
3. **Դալլաքյան Կ. (1964)**, Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, «Հայաստան» հրատ:
4. **Դանիէլեան Ժ. (1986),** Լիբանանահայ տպագրութիւնը պատերազմի տարիներուն. 1975–1984, Թեքեյան մշակութ. միութ. հրատ. :
5. **Եղիայեան Բ. (1975),** Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ. 1914–1972, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:
6. **Եազըճեան Գ. (2004),** Լիբանանահայ պարբերական մամուլը 2002 թուականին, Երևան, «Արմենիա» հրատ. :
7. **Թերզեան Մ. (1983),** Կաթողիկոսական միաբանութիւնը, Բ. Զմմառեան մատենաշար, թիվ 1, «Զմմառ» հրատ. :
8. **Թոփուզան Հ. (1986),** Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841–1946), Երևան, «Հայաստան» հրատ. :
9. **Հայ գրատպություն և գրքարվեստ (2015)**, Հանրագիտարան (գլխ. խմբ. Հովհաննես Այվազյան), Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ.:
10. **Վարժապետեան Ս. (1983),** Հայերը Լիբանանի մէջ, Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Դ, 1920–1980, Դ. Ֆերլօն:
11. **Օգնայեան Ս. (1984),** Մատենագիտութիւն «Սփիւռք» շաբաթաթերթի. 1958–1978, Պեյրութ:
12. **Խառատյան Ա. (1989),** Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ. :
13. **Խառատյան Ա. (2015),** Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900–1922), Երևան, Պատմության ինստիտուտ:

14. **Տեր Խաչատուրեան Ա. (2014)**, Հայ մամուլի մատենագիտական գործեր, Պեյրութ:

REFERENCES

1. **Babloyan M. (1965), Sp'yowr'qahay mamowli patmowt'yownic. «Ani» (1946–1955) /From the History of the Armenian Diaspora Press, "Ani"** *(1946-1955)/*, **Yerevan,** NAS RA Publishing.
2. **Levonyan G. (1934), Hayoc parberakan mamowly' /The Armenian Periodical Press/, Yerevan, Melkonian Foundation Publishing House.**
3. **Dallakyan K. (1964), Libananahay demokratakan mamowli patmowt'yownic /From the history of the Lebanese-Armenian democratic press/, Yerevan, "Hayastan" Publishing House.**
4. **Danielian Z. (1986), Libananahay tpagrowt'iwny' paterazmi tarinerown. 1975–1984 /Lebanese-Armenian Printing During the War Years, 1975-1984/, Tekeyan Cultural Union Publishing House.**
5. **Egiayan B. (1975), Jhamanakakic patmowt'iwn kat'oghikosowt'ean hayoc Kilikioy. 1914–1972** /Contemporary history of the Armenian Catholicos of Cilicia 1914-1972/, Antilias, Printed by the Catholicosate of the Great House of Armenians of Cilicia.
6. **Yazijian G. (2004), Libananahay parberakan mamowly' 2002 t'owakanin /The Lebanese-Armenian Periodical Press in 2002/, Yerevan, "Armenia" Publishing House.**
7. **Terzyan M. (1983), Kat'oghikosakan miabanowt'iwny'** /Zmaryan Catholic Congregation/. **Beirut,** No. 1, "Zmmar" Publishing House.
8. **Topuzyan H. (1986), Siriayi & Libanani haykakan gaght'o'jaxneri patmowt'yown (1841–1946)** /History of Armenian colonies in Syria and Lebanon (*1841-1946)/*, **Yerevan,** *"Hayastan" Publishing House.*
9. **Hay gratpowt'yown & grqarvest /Armenian Printing and Book Art/ (2015), Encyclopedia, Chief Editor Hovhannes Ayvazyan, Yerevan, Encyclopedia Publishing House.**

10. **Varzhapetyan S. (1983), Hayery' Libanani me'j** */Armenians in Lebanon/*, **Vol. 1-5, D.-Ferlon, 1920-1980.**
11. **Ognayan S. (1984), Matenagitowt'iwn «Sp'iwr'q» shabat'at'ert'i. 1958–1978 /Bibliography of the "Spyurk" Weekly Newspaper, 1958-1978/, Beirut.**
12. **Xaratyan A. (1989), Armevtahay parberakan mamowly' ev graqnnowt'yowny' O'smanyan T'owrqiayowm /The Western Armenian Periodical Press and Censorship in Ottoman Turkey/, Yerevan,** NAS RA Publishing.
13. **Xaratyan A. (2015), Arevmtahay mamowln ir patmowt'yan avartin (1900–1922) /Western Armenian Press at the End of Its History (***1900-1922)/***, Yerevan,** Institute of History.
14. **Ter Khachaturyan A. (2014),** Hay mamowli matenagitakan gorc'er **/Bibliographic Works of the Armenian Press/, Beirut.**

Ани Фишенкчян, Милена Катаян

Периодическая печать ливанских армян в 1945-1993 гг.

Закючение

Ключевые слова и выражения: *Ливан, периодическая печать, типография, партийные, земляческие, художественно-литературные, культурные, религиозные, спортивные, молодежные, официальные издания.*

В современных условиях переоценки национальных ценностей еще более важным становится многостороннее исследование различных проблем истории разбросанных по всему миру армянских колоний, и это один из важнейших приоритетов современных армянских историков как в колониях так и на Родине. Это делает функцию истории армянской диаспоры тех или иных стран сохранить

национальную идентичность более целостной, а также рассматривает известные, а иногда малоизвестные факты и исторические события.

Главной целью данного исследования является на основе многосторонних исследований представить периодическую печать армянской колонии в Ливане в различные годы, а также сравнить картину аналогичных явлений в период с 1945 по 1991 гг. в контексте существующих в данный период вызовов.

Исследование проводилось методом тщательного и сравнительного анализа неоспоримых и убедительных исторических фактов.

Изучение новейшей истории армянских колоний в Ливане имеет как научно-практическую и теоретическую, так и политическую и актуальную значимость. Оно с одной стороны проливает свет на произошедшие в исследуемый период запутанные события, а с другой стороны является путеводящим маяком для дальнейших исторических исследований в данной области. В этом смысле придается огромное значение деятельности типографий Зартонк и первопрестольного монастыря в Антилиасе, а также иных типографских структур. В данном смысле вышеупомянутое исследование представляет собой многосторонний, систематизированный и модернизированный анализ данной проблемы в годы вновь обретенной армянской государственности. Исследование имеет не только научное, но и практическое значение, так как факты, положения, интерпретации, заключения и соображения, приведенные в данной статье могут быть использованы в тезисах диссертации и при разработке всеобщего учебного курса, посвященного задачам истории ливанских армян.

Ani Fishenkchyan, Milena Katayan

Lebanese-armenian press from 1945 to 1991

Conclusion

Key words and expressions: Lebanon, press, printing house, party, compatriot, literary fiction, cultural, religious, sports, official, educational options.

In the current context of reinterpreting national values the comprehensive study of various issues in the history of various Armenian communities around the world is becoming even more important, which is one of the most important priorities of both Diaspora and domestic modern historiography. It completes the national preservation functions of a certain period in the history of Armenian Diaspora of a given country and examines well-known and sometimes less-known events and incidents. The main goal of the present study is to present the press published by the Lebanese Armenian community in different years based on comprehensive study of the periodical press as well as the picture of the existing connections in that field, in the context of the existing challenges from 1945 to 1991.

The research was conducted through a comparative study of undeniable and convincing historical facts. The study of a modern history of Lebanese Armenian communities is of both scientific, practical and theoretical, as well as political and contemporary significance. On the one hand, it reveals the complex events of the history of the colony during the period of study, and on the other hand, it becomes a landmark for the further development of historical thought. In this redard, we highly value the activities of the Mother See of Antelias, the Zartonk printing houses, as well as the publishing structures.

The above mentioned research in that article represents a systematic, comprehensive new analysis of the aforementioned issue during the years of the newly independent statehood.

This article has not only scientific but also practical significance. The facts presented in the work, the propositions put forward, the interpretations, the

conclusions and the considerations can be used in the future to compile a dissertation thesis and a unified university course dedicated to the problems of the history of Lebanese Armenians.

Անի Ֆիշենկճյան - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները վերաբերվում են Մերձավոր Արևելքի, մասնավորապես 1946թ. առ այսօր Սիրիայի հայ համայնքի պատմության հիմնախնդիրներին, ինչպես նաև գրական արևմտահայերենի հիմնահարցերին: Հեղինակ է մեկ մենագրության և երեսունից ավելի հոդվածների: fishenkjianani@gmail.com

Միլենա Կատայան - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայցորդ, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները վերաբերվում են 1945-1991թթ. Լիբանանում հայ գրատպության հիմնախնդիրներին: Milenakatayan@gmail.com

Ани Фишенкчян - Научный сотрудник Института истории Национальной академии наук Республики Армения, кандидат исторических наук. Научные интересы касаются проблем истории Ближнего Востока, в частности сирийской армянской общины с 1946 года по сегодняшний день, а также проблем литературного западноармянского языка. Она автор одной монографии и более тридцати статей. fishenkjianani@gmail.com

Милена Катаян - Соискатель Института истории Национальной академии наук Республики Армения, научный сотрудник Научно-исследовательского центра Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна. Научные интересы связаны с проблемами армянской печати в Ливане в 1945-1991 гг., Milenakatayan@gmail.com

Ani Fishenkchyan - Researcher of the Institute of History of the National Academy of Sciences /NAS/ of the Republic of Armenia, candidate of historical sciences. Scientific interests relate to the problems of the history of the Middle East, particularly the Syrian Armenian community from 1946 to today, as well as the problems of the literary Western Armenian language. She is the author of one monograph and more than thirty articles. fishenkjianani@gmail.com

Milena Katayan- Claimant of the Institute of History of the National Academy of Sciences /NAS/ of the Republic of Armenia, Researcher of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan. His scientific interests are related to the issues of Armenian printing in Lebanon in 1945-1991. Milenakatayan@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 16.01.2025թ.
Հանձնարարվել է գրախոսության 28.01.2025թ.
Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.